ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

06 հունիսի 2025թ.N Ե-4050

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ
ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սարուխանյան,

Ի պատասխան 2025 թվականի մայիսի 23-ին Աբովյան համայնքի ավագանուն ուղղված Ձեր թիվ 05.1//11265-2025 հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությանը (այսուհետ՝ Առաջարկություն) անհրաժեշտ եմ համարում հայտնել, որ ներկայացված Առաջարկության շրջանակներում հայց հնարավոր է հարուցել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 66-68-րդ հոդվածների սահմաններում, սակայն հաշվի առնելով նախկինում նմանատիպ առաջարկների հիման վրա ներկայացված հայցադիմումները, մասնավորապես այն փաստը, որ ՀՀ վարչական դատարանում 2022 թվականին քննված թիվ ՎԴ/6555/05/22 և թիվ ՎԴ/7046/05/22 վարչական գործերի շրջանակներում Աբովյան համայնքի ավագանուն արդեն իսկ հայտնի է Առաջարկության մեջ մատնանշված Աբովյանի քաղաքապետի 30.10.2014թ. թիվ 863 որոշման հանգամանքները, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի կողմից դրանց վարույթի ընդունումը մերժելու հիմնավորումները, գտնում եմ, որ Աբովյան համայնքի ավագանու՝ որպես հայցվորի, արդեն իսկ բաց է թողնված Օրենսգրքով սահմանված հայց ներկայացնելու դատավարական ժամկետները, ուստի խնդրում եմ քննարկել ՀՀ գլխավոր դատախազության լիազորությունների շրջանակներում հայցադիմում ներկայացնելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով Աբովյանի քաղաքապետի 30.10.2014թ. թիվ 863 որոշման ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ Առաջարկության մեջ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված փաստական և իրավական հիմնավորումները, մասնավորապես՝ խնդրո առարկա հանդիսացող ավտոտնակը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ընդգրկված լինեու վերաբերյալ հիմնավորումները, հայտնում եմ, որ Աբովյան համայնքի ավագանու «ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» 13.08.2024թ. N 111-Ն որոշմամբ հաստատվել է Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը, համաձայն որի Առաջարկության մեջ նշված Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 1 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 18,25 քմ մակերեսով հողամասը հաշվի առնելով առկա քաղաքաշինական իրավիճակը, այլևս չի հանդիսանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում

ընդգրկված հողամաս:
Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի քննարկմանը՝ սույն թվականի հունիսի 25-ին, կներկայացվի նաև համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու հարցը: Նման պայմաններում, հաշվի առնելով քննարկվող հողամասի ներկայումս ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում ընդգրկված չլինելու փաստը, հայց հարուցելու նպատակահարմար լինելու վերաբերյալ մինչև Ավբովյան համայնքի ավագանու հերթական նիստի կայանալը ակնկալում ենք Ձեր դիրքորոշումը:
Կից ներկայացվում է Ավագանու խմբակցությունների ղեկավարներին ՀԿՏՀ-ով ուղարկված նամակի և ստացված պատասխանների պատճենները:
Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կապ. Իրավաբանական բաժնի պետ
Ջ. Սարգսյան
060-53-64-27